# Ճգնաժամային հղիության կենտրոններ (CPC)

Ինչպես ճանաչել հակաաբորտային կենտրոնները և խուսափել դրանցից

## Ի՞նչ են ճգնաժամային հղիության կենտրոնները (CPC)

- Թվում է, թե ճգնաժամային հղիության կենտրոնները հղիների համար կլինիկաներ են, որոնք գովազդում են վերարտադրողական բոլոր ծառայությունները: Սակայն ճգնաժամային հղիության կենտրոնները ՉԵՆ կատարում աբորտի՝ հղիության արհեստական ընդհատման գործողություն և ՉԵՆ տրամադրում խորհրդատվություն կամ դեղահաբեր:
- Բազմաթիվ ճգնաժամային հղիության կենտրոնների նպատակն է համոզել հղիներին հրաժարվել աբորտից:
- Բազմաթիվ ճգնաժամային հղիության կենտրոններ միտումնավոր տեղակայված են աբորտների կլինիկաների մոտ: Դրանց գովազդները և կայքերը նպատակ ունեն շփոթության մեջ գցել այն մարդկանց, ովքեր կարող են մտածել հղիության արհեստական ընդհատման մասին:

## Ուշադրություն դարձրեք այս հուշող նշաններին, երբ համացանցում փնտրում եք աբորտի ծառայություններ.

**«Խորհրդատվություն՝ կապված հղիությանը վերաբերող որոշումների հետ»**
Ճգնաժամային հղիության կենտրոնները (CPC) հակված են գովազդելու հղիության անվճար թեստեր, և եթե հաճախորդի հղիության թեստի պատասխանը դրական է, ճգնաժամային հղիության կենտրոնները նպատակ են դնում համոզել հաճախորդներին շարունակել հղիությունը և ծննդաբերել:

**«Անվճար ուլտրաձայնային հետազոտություն՝ սահմանափակ»**
Որոշ տեղերում կատարում են անվճար ուլտրաձայնային հետազոտություններ, որոնք հաճախ արվում են չպատրաստված անշխատակիցների կողմից և օգտագործվում են հիմնականում ոչ թե հաճախորդներին տեղեկացնելու համար, այլ նրանց դրդելու հրաժարվել աբորտից՝ հղիության արհեստական ընդհատումից:

**«Խորհրդատվություն աբորտից հետո»**
Ճգնաժամային հղիության կենտրոնները ենթադրում են, որ աբորտ անելը բացասական փորձառություն է, և նրանք, ովքեր ունեցել են այն, կարիք ունեն խորհրդատվության: Իրականում մարդկանց մեծ մասը աբորտից հետո թեթևություն է զգում:

**«Աբորտի հետշրջման դեղահաբեր»**
Ճգնաժամային հղիության կենտրոնները գովազդում են հղիության արհեստական ընդհատման «հետշրջման» ծառայություններ:
Այս գործելակարգը ՉԻ հաստատվում գիտության կողմից և կարող է վնասակար լինել առողջության համար:

March 2024 (Armenian)

ABORTION SAFE HAVEN PROJECT

County of Los Angeles Public Health

# Նկատեք հուշող նշանները

**«Մենք չենք անում հղիության արհեստական ընդհատում և չենք ուղղորդում դրան»:** Չնայած հղիության արհեստական ընդհատումը նշված է որպես առաջարկվող ծառայություն՝ այս ճգնաժամային հղիության կենտրոնը (CPC) իրականում չի կատարում հղիության արհեստական ընդհատումներ, այլ ավելի շուտ նպատակ ունի համոզել մարդուն չանել դա:

Have you taken the first dose of the abortion pill, Mifepristone (Mifeprex or RU-486)? Do you regret your decision and wish you could reverse the effects of the abortion pill?

We are waiting to help you! There is an effective process for reversing the abortion pill, called ABORTION PILL REVERSAL, so call today! Call us right now, we know that an unplanned pregnancy can be scary and many women who have taken the abortion pill experience regret. If this describes your situation, you are not alone, and there is help for you. IT MAY NOT BE TOO LATE IF YOU CALL QUICKLY.

rtion pill. The Abortion Pill Reversal procedure is
gesterone has been safely used to support

health risks or side effects for the mother or the

pill, mifepristone, also known as RU-486. However,
taking the abortion pill. It may not be too late.

Կլինիկաները, որոնք գովազդում են **«աբորտի հետշրջման դեղահաբեր»**, ամենայն հավանականությամբ ճգնաժամային հղիության կենտրոններ են: Այս գործողությունը **ՉԻ հաստատվում գիտության կողմից**: Հղիության արհեստական ընդհատման հետ կապված բառապաշարը, օրինակ՝ «ափսոսանք» և «վիշտ», նույնպես կարող է զգուշացնող նշան լինել:



ABORTION SAFE HAVEN PROJECT

County of Los Angeles Public Health

# Աղբյուրներ

Յուրաքանչյուր ոք արժանի է, որ իրեն հասանելի լինի այնպիսի առողջապահական խնամք, որը զերծ է խարանից, ոտնձգություններից և ամոթից: Բուժառուներն իրավունք ունեն ստանալ փաստերի վրա հիմնված գիտելիք և հաճախորդակենտրոն խնամք, որն ընդգրկում է հղիության բոլոր տարբերակները:

**Հղիության արհեստական ընդհատման՝ աբորտի մասին ճշգրիտ տեղեկատվության և վերարտադրողական առողջության խնամքի օրինական կլինիկա գտնելու համար այցելեք՝**

- Լոս Անջելեսի Շրջանի «Աբորշն Սեյֆ Հեվն» -ի (Abortion Safe Haven) աղբյուրների ուղեցույց՝ http://publichealth.lacounty.gov/owh/Abortion/MultilingualResources.htm

**Հայտնեք ճգնաժամային հղիության կենտրոնի (CPC) մասին**
Կալիֆորնիա նահանգը մտահոգված է ճգնաժամային հղիության կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների սահմանափակ և պոտենցիալ ապակողմնորոշիչ բնույթով: Գլխավոր դատախազ Բոնտան կոչ է անում վերարտադրողական առողջության ծառայություններ փնտրող Կալիֆորնիայի բնակիչներին ուսումնասիրել նախքան կլինիկա գնալը, որպեսզի իմանան աբորտի իրենց տարբերակների մասին:

**Եթե դուք այցելել եք ճգնաժամային հղիության կենտրոն և կարծում եք, որ դարձել եք խաբուսիկ, ապակողմնորոշող, անարդար կամ անօրինական վարքագծի զոհ կամ թիրախ, խնդրում ենք անհապաղ բողոք ներկայացնել այստեղ՝** https://oag.ca.gov/crisis-pregnancy-center-complaint:


1. Designed to Deceive CPC Study. Genderjustice.us. Accessed October 12, 2023. https://www.genderjustice.us/work/designed-to-deceive-cpc-study/.
2. Kendall. Plannedparenthood.org. Accessed October 12, 2023. https://www.plannedparenthood.org/blog/what-are-crisis-pregnancy-centers.
3. The CPC Industry as a Surveillance Tool of the Post-Roe State. Genderjustice.us. Accessed October 12, 2023. https://www.genderjustice.us/wp-content/uploads/2022/02/Alliance_CPC_Report_Feb2022_UrgentBrief2-10-22.pdf.
4. Attorney General Bonta Issues Consumer Alert Warning Californians That Crisis Pregnancy Centers Do Not Offer Abortion or Comprehensive Reproductive Care. Oag.ca.gov. Accessed October 12, 2023. https://oag.ca.gov/news/press-releases/attorney-general-bonta-issues-consumer-alert-warning-californians-crisis.
5. Facts Are Important: Medication Abortion “Reversal” Is Not Supported by Science. acog.org. Accessed 10/11/2023. https://www.acog.org/advocacy/facts-are-important/medication-abortion-reversal-is-not-supported-by-science.


March 2024 (Armenian)

ABORTION SAFE HAVEN PROJECT

COUNTY OF LOS ANGELES CALIFORNIA

COUNTY OF LOS ANGELES Public Health